

«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»  
ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հավելված  
«Վանաձորի Հ. Թումանյանի անվան  
պետական համալսարան» հիմնադրամի  
ռեկտորի պաշտոնակատարի 31.01.2019 թ. թիվ 74 Լ/Կ հրամանի

ՎԱՆԱՁՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ  
ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ (ՀԱՐԱՏԵՎ) ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ  
2019 - 2021 ԹԹ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ  
ՈՒՂՂՎԱԾ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆԸ

Ստեղծվել է PRINTeL ծրագրի շրջանակներում  
ERASMUS+ CBHE PROJECT # 585760-EPP-1-2017-1-AM-EPPKA2-CBHE-JP  
«Փոփոխություն լսարանում. Նորարարական դասավանդման և ուսումնառության օժանդակում՝ արևելյան  
գործընկերության երկրներում ուսանողի ուսումնական փորձառության բարելավման նպատակով»

Ընդունված է ՎՊՀ-ի գիտխորհրդի կողմից  
Արձանագրություն թիվ 1 24.01.2019 թ.

Վանաձոր  
2019թ.

## 1. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ և ՏԵՍԼԱԿԱՆ

**Առաքելությունը:** Վանաձորի պետական համալսարանի Շարունակական (հարատև) կրթության կենտրոնի աշխատակիցների որակավորման բարձրացման աշխատանքների համակարգումը նպատակաուղղված է համալսարանի դասախոսների պատրաստականության մակարդակի բարձրացմանը և մասնագիտական, մանկավարժական, հետազոտական կարողությունների զարգացմանը:

**Տեսլականը:** Վանաձորի պետական համալսարանի Շարունակական (հարատև) կրթության կենտրոնի աշխատակիցների որակավորման բարձրացման աշխատանքների համակարգումը իրականացվում է Համալսարանի ռազմավարական նպատակներին համահունչ, իրականացվում են համապատասխան նորարարական դասավանդման/ ուսուցման գործիքների և առաջատար փորձի փոխանակման միջոցով դասախոսական կազմի որակավորման բարձրացման ծրագրեր՝ ստեղծելով կրթության որակի ապահովման ժամանակակից պահանջներին համարժեք կրթական նոր միջավայր:

## 2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Վանաձորի պետական համալսարանում դասախոսական կազմի վերապատրաստման համակարգը ներդրվել է 2012թ.՝ Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտի Լրացուցիչ կրթության կենտրոնում: Դասախոսական կազմի վերապատրաստումն իրականացվում է Համալսարանի զարգացման ռազմավարական ծրագրային դրույթներին համապատասխան: 2012թ. գործողության մեջ է դրվել «Կրեդիտային համակարգով պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման կրթագիտական ծրագիրը», ըստ որի վերապատրաստումներն անց են կացվում հնգամյա շրջափուլով: Կրեդիտային համակարգով դասախոսական կազմի վերապատրաստումը շարունակական բազմափուլ գործընթաց է, որի առաջին փուլն ընդգրկում է 2012-2017թթ: 2015թ. Լրացուցիչ կրթության կենտրոնը վերանվանվեց Վանաձորի պետական համալսարանի Շարունակական կրթության կենտրոնի՝ գործառույթների անհամեմատ ընդլայնմամբ: Դասախոսական կազմի վերապատրաստումը շարունակում է մնալ կենտրոնի կարևորագույն գործառույթներից մեկը:

Վանաձորի պետական համալսարանի դասախոսական կազմի որակավորման բարձրացման ծրագրի առանձնահատկություններն են՝

1. կրթական և հետազոտական-ուսումնամեթոդական կառուցամասերը՝ պարտադիր և կամրնտրական բաղադրիչներով,
2. աշխատաձևավալի չափումը ECTS կրեդիտներով,
3. ընդհանուր աշխատաձևավալը՝ 30 կրեդիտ, տևողությունը՝ 5 տարի,
4. ավարտին՝ ունկնդիր դասախոսների ատեստավորում:

Վերապատրաստման ծրագիրն իրականացվում է հետևյալ բնագավառներում՝

1. Կրթական կառուցամաս
  - 1.1. Անզլերենն ակադեմիական միջավայրում
  - 1.2. Իրավական պատրաստություն
  - 1.3. Մանկավարժահոգեբանական պատրաստություն
  - 1.4. Մասնագիտական պատրաստություն
2. Հետազոտական կառուցամաս
  - 2.1. Հրատարակումներ
  - 2.2. Զեկուցում համաժողովում

Ծրագիրը ներկայացված է *Հավելված 1-ում*։

2017թ. ամփոփվել են հնգամյա ծրագրի առաջին շրջափուլի արդյունքները, համաձայն որի մինչ օրս ծրագրի շրջանակներում վերապատրաստվել են համալսարանի 161 դասախոսներ։

Կրեդիտային հիմունքներով պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման ծրագիրը մեծապես նպաստել է պրոֆեսորադասախոսական կազմի իրավագիտակցության աճին, դասավանդման փորձի փոխանակման պրակտիկայի ձևավորմանը, նորարարական տեխնոլոգիաներից օգտվելու հմտությունների զարգացմանը և դասապրոցեսում դրանք արդյունավետ ներդնելուն։

Կրեդիտային համակարգով պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման ծրագրի առաջին շրջափուլի ավարտին արձանագրվել են մի շարք խնդիրներ՝

1. կարիքների վերլուծության համակարգի անկատարություն,
2. դասախոսների վերապատրաստման մոտիվացիայի ցածր մակարդակ,
3. սկսնակ և փորձառու դասախոսական կազմերի վերապատրաստման կարիքների տարանջատման բացակայություն,
4. նորարարական կրթական տեխնոլոգիաների ոչ բավարար կիրառություն։

### **3. ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ (ՀԱՐԱՏՆ) ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԵՆԹԱԲԱՏՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Շարունակական (հարատև) կրթության կենտրոնում աշխատակիցների որակավորման բարձրացման աշխատանքների համակարգման ուղղությամբ իրականացվող գործառնություններն են.

1. Պլանավորել և կազմակերպել Համալսարանի դասախոսների մասնագիտական կարողությունների զարգացմանը միտված դասընթացներ,
2. Ընդլայնել կրթական գործընթացում տեղեկատվական նորարարական տեխնոլոգիաների կիրառման հնարավորությունները
3. Իրականացնել մանկավարժական խորհրդատվություն
4. Կազմակերպել փորձի փոխանակմանը միտված գիտաժողովներ, աշխատաժողովներ և սեմինարներ

5. Նպաստել լավագույն դասավանդման լավագույն փորձի տարածմանը և փոխանակմանն աջակցող նախաձեռնություններին
6. Ապահովել կենտրոնի աշխատակիցների ընդհանուր և մասնագիտական կոմպետենցիաների շարունակական զարգացումը,
7. Հրատարակել դասավանդման ժամանակակից մեթոդների ուսուցմանը և տարածմանն ուղղված տարբեր հոդվածներ, ձեռնարկներ, ուղեցույցներ և այլն:

### **3.1. Համալսարանի դասախոսների մասնագիտական կարողությունների զարգացման դասընթացներ**

Համալսարանում գործում է դասախոսական կազմի վերապատրաստման համակարգ, որի արդիականացման ուղղությամբ 2019-2021 թթ. գործունեության ծրագրի շրջանակներում առանձնակի ուշադրություն կդարձվեն նոր կրթական և տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրմանը և զարգացմանը: Մասնավորապես կկարևորվի եվրոպական համալսարանների փորձի ներդրումը:

Նոր կրթական և տեղեկատվական տեխնոլոգիաների ուսուցանումն առաջին փուլում առավել կկարևորվի այն փորձառու դասախոսների համար, ովքեր անցել են դասընթացների 1 շրջափուլը և, տիրապետելով SՏՏ որոշակի գործիքների, կարող են բարձրացնել որակավորումը: Հաջորդ փուլում կներգարվեն նաև սկսնակ դասախոսները ունենալով որոշակի գիտելիքներ և հմտությունները մեկնարկային մակարդակում:

Որպես նոր որակական ձեռքբերում, նախատեսվում է ներդնել հետևյալ դասընթացները՝ 1-ական կրեդիտ աշխատաձևավալով (10 ժամ լսարանային +20 ժամ ինքնուրույն աշխատանք)։

1. Ակտիվ ուսումնառություն՝ առաձնահատուկ շեշտադրելով տեխնոլոգիական ընդլայնված համագործակցային ուսումնառությունը
2. Ակտիվ ուսումնառություն «Շրջված լսարան»-ում
3. Ակտիվ ուսումնառություն և SՏՏ ընդլայնված դասավանդում. բջջային ուսումնառություն և խաղեր
4. Տեսանյութը որպես ուսումնառության գործիք դասախոսների և ուսանողների համար. տեսադասախոսություն և փոխներգործության խթանում լսարանում
5. Հիբրիդային/համակցված դասավանդում և ուսումնառություն

Դասընթացների ուղղվածության որոշման նպատակով 2018թ.-ին Համալսարանում ուսանողների և դասախոսների շրջանում իրականացվել են դասավանդման և ուսումնառության մեթոդների վերաբերյալ հարցումներ և կարիքների վերլուծություն

(<https://www.printel.am/uploads/page/pdfs/P3.%20VSU%20Need%20Analysis%20Report.pdf>)  
f):

## **Դասընթաց 1. Ակտիվ ուսումնառություն՝ առաձնահատուկ շեշտադրելով տեխնոլոգիական ընդլայնված համագործակցային ուսումնառությունը**

**Դասընթացի նպատակները** - Վերապատրաստման դասընթացի նպատակն է դասավանդել դասախոսներին ինչպես կազմակերպել ուսանողների ակտիվ ուսումնառությունը՝ առաձնահատուկ շեշտադրելով տեխնոլոգիական ընդլայնված համագործակցային ուսումնառությունը: Դասընթացը կօգնի դասախոսներին փոխարինել դասախոսությունը և մենախոսությունը երկխոսությամբ՝ մեծ քանակով ուսանողներ ներգրավելով համագործակցային ուսումնառությամբ դասընթացի պլանավորման, նախագծման և ներկայացման աշխատանքներում:

**Ուսումնառության վերջնարդյունքները** - Դասընթացի ավարտին մասնակիցը պետք է կարողանա.

- իմանալ, ինչ է ակտիվ ուսուցում (և ուսանողների ակտիվացումը) և ինչու պետք է խրախուսվի
- իմանալ ինչ է համագործակցային ուսումնառությունը և ինչու է բարելավում է ուսումնառության փորձառության որակը
- ինչպես կարող է իրականացնել ակտիվ և համագործակցային ուսումնառությունը
- Ինչպես կիրառել տեխնոլոգիաները ձեռքբերելու համագործակցային ուսումնառության փորձառություն:

Դասընթացին վերաբերող ուսումնական նյութերը, հոդվածները և ներկայացումները (presentations) հասանելի են <https://sites.google.com/view/printel-kul/home> էլեկտրոնային հասցեով:

## **Դասընթաց 2. Ակտիվ ուսումնառություն «Շրջված լսարան»-ում**

**Դասընթացի նպատակները** - Դասընթացի ընդհանուր նպատակն է բարձրագույն կրթության համակարգում դասավանդողներին նախապատրաստել աջակցելու «Շրջված լսարան»-ի մոդելով, թվային գործիքների օգտագործմամբ ակտիվ ուսուցման մշակմանը և զարգացմանը:

**Ուսումնառության վերջնարդյունքները** - Դասընթացի ավարտին մասնակիցը պետք է կարողանա.

- քննարկել, ինչպես կարող են ակտիվ ուսուցումը և թվային գործիքները նպաստել ուսանողների ուսումնառությանը,
- կիրառել թվային գործիքներ դասավանդման ու ուսումնառության, դասընթացի նյութերի պատրաստման ընթացքում ակտիվ ուսուցումը խթանելու նպատակով,
- նախագծել դասընթացը, որտեղ թվային դասընթացի նյութերը և թվային գործիքները ակտիվորեն նպաստում են ուսուցման գործընթացին:

Դասընթացին վերաբերող ուսումնական նյութերը, հոդվածները և ներկայացումները (presentations) հասանելի են <https://old.liu.se/didacticum/printel?!=en> էլեկտրոնային հասցեով:

**Դասընթաց 3. Ակտիվ ուսումնառություն և S2S ընդլայնված դասավանդում.  
բջջային ուսումնառություն և խաղեր**

**Դասընթացի նպատակները** –Այս դասընթացում մասնակիցները կքննարկեն ինչպես նախագծել խաղերով մոդելավորված դաս և ինչպես օգտվել բջջային սարքավորումներից դասի ժամանակ և դասերից դուրս՝ ուսանողների ուսումնառությունը խթանելու նպատակով: Ակտիվ ուսումնառությունը ենթադրում է ինտերակտիվ գործիքների և ռեսուրսների կիրառություն ուսանողների կողմից, նաև փոխգործակցություն դասավանդողների և ուսումնառողների միջև: Այս կրթական փոխակերպումը հնարավորություն է տալիս դիտարկելու ուսումնառության և դասավանդման գործընթացները տարբեր տեսանկյուններից, որտեղ կենտրոնում S2S կիրառող ուսանողն է: Կրթության մեջ խաղերի կիրառումը կրթական ռազմավարություններից է, որը մոտիվացնում է ուսանողներին ուսումնառության միջավայրում սովորել խաղային հավելվածներով: Նպատակին կարելի է հասնել կիրառելով թվային գործիքներ և ռեսուրսներ, կամ ավանդական ձևով, սակայն S2S-ն կարող է օգնել նորարարական ուսուցման ռազմավարության իրականացման գործում: Բջջային ուսուցումը ներառում է բջջային տեխնոլոգիաների կիրառություն միայն կամ այլ S2S միջոցների հետ համակցված, որը հասանելի կլինի ցանկացած ժամանակ և ցանկացած վայրում: Ուսումնառությունը կարելի է իրականացնել տարբեր ուղիներով՝ կարող են օգտագործել բջջային սարքերը լսարանում կամ լսարանից դուրս կրթական ռեսուրսներին հասանելի լինելու, ուրիշների հետ կապ հաստատելու, կամ բովանդակային նյութերի ստեղծելու համար:

**Ուսումնառության վերջնարդյունքները** - Դասընթացի ավարտին մասնակիցը պետք է կարողանա.

- կազմել բջջային ուսուցման գաղափարների քարտեզ, որոնք ընդունելի են դասավանդման համատեքստում,
- կատարել գործընթացի նախագծման, դեկավարման և գնահատման պլանավորում,
- ստեղծել մեթոդի կիրառության նախագիծ,
- կազմել անհատական քայլերի ժամանակացույց:

Լրացուցիչ ուսումնական նյութերի, նաև փորձագիտական խմբի հետ կապ հաստատելու համար հասանելի է Բարսելոնայի Համալսարանի հետազոտական խմբի <http://www.ub.edu/realtic/en/> կայքը:

**Դասընթաց 4. Տեսանյութը որպես ուսումնառության գործիք դասախոսների և ուսանողների համար. տեսադասախոսություն և փոխներգործության խթանում լսարանում**

**Դասընթացի նպատակները** - Այս դասընթացը կանդրադառնա դասավանդման և ուսումնառության մի քանի կոնկրետ իրավիճակների. ինչպես օգտագործել

տեսանյութը որպես ուսումնառության գործիք և՛ լսարանում, և՛ լսարանից դուրս, նաև առանձին գործիքների, որոնք դասախոսները կկարողանան օգտագործել ուսումնառողներին մոտիվացնելու և սեփական ուսումնառության որակի բարձրացման գործընթացում նրանց ներգարվելու համար:

Կան տեսանյութը որպես ուսումնառության գործիք արդյունավետությամբ կիրառելու տարբեր ուղիներ և այս դասընթացի ընթացքում դասավանդողները հնարավորություն կունենան կիրառել դասավանդման մի քանի ռազմավարություններ, որոնք ունեն մանկավարժական նպատակներ, սահմանված վերջնարդյունքներ:

**Ուսումնառության վերջնարդյունքները** - Դասընթացի ավարտին մասնակիցը պետք է կարողանա.

- Հասկանալ տեսանյութի կիրառության կարևորությունը դասավանդման և ուսումնառության գործընթացում,
- Հասկանալ տարբեր իրավիճակներում տեսանյութի կիրառության նշանակությունը դասավանդման և ուսումնառության գործընթացում,
- Համադրել ներկայացված փորձառության ակնկալիքները և ձեռք բերված պրակտիկան,
- Կիրառել տեսանյութը առցանց ուսումնառության տարբեր իրավիճակներում,
- Սահմանել պրակտիկայում տեսանյութի բոլոր արդյունավետ կիրառությունները:

Դասընթացին վերաբերող ուսումնական նյութերը, հոդվածները և ներկայացումները (presentations) հասանելի են <https://sites.google.com/g.uporto.pt/printel/home/tot-course-programme/presentations> էլեկտրոնային հասցեով:

#### **Դասընթաց 5. Հիբրիդային/համակցված դասավանդում և ուսումնառություն**

**Դասընթացի նպատակները**-Վերապատրաստման դասընթացը նախատեսում է դասախոսական աշխատակազմի ուսուցանում հիբրիդային/համակցված դասավանդման և ուսումնառության մեթոդով, որպես նոր ուսուցման եղանակ և մեթոդոլոգիա: Դասընթացի մասնակիցներին կներկայացվի հիբրիդային/համակցված դասավանդման և ուսումնառության հայեցակարգը, մոտեցումները, պահանջվող ենթակառուցվածքները:

**Ուսումնառության վերջնարդյունքները**-Դասընթացի ավարտին մասնակիցը պետք է կարողանա.

- Հասկանալ առցանց ուսումնառության և հաղորդակցման գործընթացները, տարբերությունը առկա և առցանց ուսուցումների միջև,
- ծանոթանալ տեխնոլոգիական միջոցներին

- քննարկել դասավանդողի փոփոխված դերը առցանց կարգավորումներում և գնահատել հեռադարձ կապը,
- Իմանալ առցանց համագործակցային գործիքները, որոնք միտված են նախագծով սահմանված դասընթացների աջակցությանը,
- Ստեղծել մուլտիմեդիայով աշխատանքներ, ինչպիսիք են ներկայացումները (presentations), տեսանյութեր կամ էլեկտրոնային գրքեր, որպես դիդակտիկ մոտեցումներ սեփական ուսումնասրության/դասավանդման իրավիճակներում:

Դասընթացին վերաբերող ուսումնական նյութերը, հոդվածները և ներկայացումները (presentations) հասանելի են <https://www.printel.am/category/workshops---seminars/tot-course-in-graz> էլեկտրոնային հասցեով:

Գործընթացն իրականացնելու համար 2019թ. հունվար-փետրվար ամիսներին կիրականացվի դասախոսների վերապատրաստման ուսումնական պլանի համարժեք փոփոխություն և կներկայացվի Համալսարանի ղեկավարության հաստատմանը:

Դասընթացների կազմակերպումը պլանավորվում է իրականացնել փետրվար-մարտ ամիսներին:

Որակավորման բարձրացման գործընթացի կազմակերպմանը մասնակից դարձնելով բոլոր շահառու կողմերին, ապահովելով հետադարձ կապը, կկարողանանք բարձրացնել և դասախոսական կազմի մոտիվացիան, և դասընթացերի արդյունավետությունը:

### **3.2. Մանկավարժական խորհրդատվություն**

Մանկավարժական խորհրդատվության կազմակերպումը նախատեսվում է իրականացնել կենտրոնի աշխատակցի, վերաբաղադաստող դասախոսների և ամբիոնների վարիչների համագործակցությամբ: Մանկավարժական խորհրդատվության շրջանակներում կստեղծվի գիտելիքների, հմտությունների ու դասավանդման փորձի փոխանակման ստեղծարար միջավայր, որի գործունեության արդյունավետության ցուցանիշները կլինեն կրթական ծրագրի մասնագրի ստեղծումը, կրթական վերջնարդյունքների ձևակերպումը, մանկավարժական-հոգեբանական հմտությունների զարգացումը, փորձի փոխանակումը, տարբեր ենթակառուցվածքների համար խորհրդատվության ապահովումը և այլն:

### **3.3. Գիտաժողովներ, աշխատաժողովներ և սեմինարներ**

Համալսարանում կարևորվում է գիտաժողովների, կոնֆերանսների և սեմինարների դերը, որպես լավագույն փորձի տարածման և փոխանակման, քննարկային հարթակների ստեղծման, համագործակցության շրջանակների ընդլայնման հնարավորություններ:



Որոշակի արդյունքների առկայությամբ նախատեսվում է կազմակերպել գիտաժողովները սկսած 2020-ից: Աշխատաժողովների կազմակերպումը կիրականացվի յուրաքանչյուր կիսամյակ ներֆակուլտետային, համահամալսարանական և տարածաշրջանային մակարդակներով, բուհական դասավանդմանը, նորարարական մեթոդներով ուսուցման հմտությունների ձևավորմանը և զարգացմանը վերաբերող տարբեր քննարկային հարթակներում:

Գիտաժողովների, աշխատաժողովների մասնակիցների, կազմակերպիչների կողմից կատարված արդյունավետ աշխատանքի գնահատման համար կստեղծվեն և կգործարկվեն մոտիվացիայի բարձրացման մեխանիզմներ:

### **3.4.Ցանցային աշխատանք և լավագույն փորձի տարածում**

Անդամակցելով դասավանդման և ուսումնառության վիրտուալ ակադեմիային (VATL)՝ Համալսարանի դասախոսական կազմը հնարավորություն կունենա համագործակցել գործընկեր համալսարանների վերապատրաստված դասախոսական կազմի հետ, ստեղծել միջազգային ֆորումներ, փոխանակել զաղափարները, մեթոդները, դասավանդման գործիքները և այլն: Համագործակցությունը կարող է լինել նպատակային և թիրախավորված.

- ըստ դասընթացների,
- ըստ մանկավարժական կամ տեղեկատվական ծրագրերի մեթոդի կիրառության,
- ըստ կազմակերպական աշխատանքների և այլն:

Համալսարանում կարևորվում է նոր անդամների ներգրավումը ցանցային աշխատանքում, նաև ներքին և արտաքին առցանց համագործակցային միջավայրի ապահովումը:

Ձեռքբերումների տարածումը կընդգրկի տարածաշրջանային կրթական կառույցները:

### **3.5. Զարգացման ծրագրեր**

Շարունակական (հարատև) կրթության կենտրոնի աշխատակիցների որակավորման բարձրացման աշխատանքների համակարգման շրջանակներում ձեռքբերված փորձառության հիման վրա կշարունակի ներգրավվածությունը միջազգային այն ծրագրերում, որոնք միտված են կենտրոնի կարողությունների հզորացմանը, դասավանդողների մանկավարժական հմտությունների զարգացմանը և նորարարական մեթոդների ներդրմանը:

Ձեռքբերված փորձառությունը կենտրոնը կկիրառի համալսարանի ուսումնառման դասակարգման կազմի որակավորման բարձրացմանն ուղղված աշխատանքներում:

Ձեռքբերված փորձառությունը հնարավորություն կտա հանդես գալու նոր նախաձեռություններով և նախագծերով, որոնք կարող են ներկայացվել որպես Եվրոպական հանձնաժողովի կողմից ֆինանսավորվող կամ լոկալ

(տարածաշրջանային) կառավարման համակարգերի կողմից աջակցություն ակնկալող նոր նախագծեր:

### **3.6. Հրատարակումներ և ուսումնական նյութեր**

Շարունակական (հարատև) կրթության կենտրոնը աշխատակիցների որակավորման բարձրացման աշխատանքների համակարգման նպատակով ձեռքբերված փորձառության տարածման և լավագույն փորձի փոխանակման նպատակով կմշակի, կհրատարակի և կտարածի ուսումնամեթոդական (տպագիր և էլեկտրոնային) նյութեր: Դրանք կարող են լինել.

- բուկլետներ,
- ձեռնարկներ,
- մասնագիտական առաջարկներ,
- պարբերական հրատարակություններ,
- գիտաժողովների, աշխատաժողովների և սեմինարների արդյունքներն ամփոփող նյութեր,
- դասավանդմանն առնչվող հետազոտությունների արդյունքները և փորձը,
- ՀՀ և եվրոպական գործընկեր համալսարանների՝ ոլորտին վերաբերող նորություններ և այլն:

## **4. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ և ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ**

Վանաձորի պետական համալսարանում աշխատակիցների որակավորման բարձրացման աշխատանքների համակարգման աշխատանքներն իրականացվում է Շարունակական (հարատև) կրթության կենտրոնի կողմից: Վարչությունը ղեկավարում է ղեկավարը՝ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի համակարգմամբ:

### **4.1. Կառուցվածքը**

Շարունակական (հարատև) կրթության կենտրոնն ունի երեք աշխատակից՝ ղեկավար, Համալսարանի աշխատակիցների որակավորման բարձրացման աշխատանքների համակարգող, լեզուների ուսուցման աշխատանքների համակարգող: Կենտրոնի գործունեությունն իրականացվում է Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի շարունակական (հարատև) կրթության կենտրոնի կանոնակարգով՝ (հաստատված ՎՊՀ-ի գիտխորհրդի կողմից 24.12.2015թ.):

*Կենտրոնի գործառույթներն են՝*

- Համալսարանի աշխատակիցների մասնագիտական որակավորման բարձրացումը, վերապատրաստումը,
- Համալսարանի աշխատակիցների ընդհանրական, առարկայական, մասնագիտական, գիտական և հետազոտական կարողությունների շարունակական զարգացումը,

- լեզուների իմացության իրազեկության համաեվրոպական համակարգի պահանջների հիման վրա տարբեր խմբերի համար լեզվական գիտելիքների և հմտությունների զարգացումը և ամրապնդումը,
- աշխատաշուկայի պահանջարկի հիման վրա թիրախային տարբեր խմբերի վերապատրաստման, որակավորման բարձացման և վերաորակավորման դասընթացների կազմակերպումը նորագույն փաթեթային (քեյսային), ինտերնետ և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների արդյունավետ գույակցման և կիրառման միջոցով,
- կարճաժամկետ դասընթացների միջոցով սոցիալապես առավել խոցելի խավերի համար զբաղվածության հնարավորության բարձրացումը,
- ինտեգրումը լրացուցիչ և շարունակական կրթության միջազգային հանրությանը և զբաղվածության ոլորտի զարգացումներին

Կենտրոնը սերտ համագործակցում է ամբիոնների և Համալսարանի որակի ապահովման կենտրոնի հետ: Շարունակական (հարատև) կրթության կենտրոնի աշխատանքներին մասնակցում են դասընթացները վարող դասախոս-փորձագետները:

#### **4.2. Դերային նկարագրերը**

Շարունակական (հարատև) կրթության կենտրոնի աշխատակիցների գործառույթները և պարտականությունները սահմանվում են կենտրոնի գործունեության կանոնակարգով և պաշտոնների անձնագրերով:

1. Կենտրոնի ղեկավարը իրականացնում է Համալսարանում արտաքին և ներքին շահառուների համար շարունակական (հարատև) կրթության ծառայությունների մատուցման, այդ թվում նաև դասախոսական կազմի որակավորման բարձրացման դասընթացների հետ առնչվող պլանավորման, ուղղորդման, համակարգման և վերահսկման աշխատանքներ:
2. Աշխատակիցների որակավորման բարձրացման աշխատանքների համակարգողը Համալսարանի ներքին շահառուների համար իրականացնում է նշված աշխատանքների պլանավորում, կազմակերպում, կատարում է վերլուծություն և մասնակցում է ուսումնամեթոդական նյութերի ստեղծմանը, խորհրդատվությունների կազմակերպմանը, աջակցում է ուսուցման նոր մեթոդների ներդրմանը:
3. Լեզուների ուսուցման աշխատանքների համակարգողը իրականացնում է նշված աշխատանքների պլանավորում, կազմակերպում, կատարում է վերլուծություն և մասնակցում է ուսումնամեթոդական նյութերի ստեղծմանը, խորհրդատվությունների կազմակերպմանը աջակցում է ուսուցման նոր մեթոդների ներդրմանը:

Կենտրոնի աշխատանքներում ներգրավված դասախոս-փորձագետները վարում են դասընթացները, մասնակցում առաջատար փորձի տարածման

աշխատանքներին, հետազոտությունների իրականացմանը, կոնֆերանսների և սեմինարների անցկացմանը:

#### **4.3. Համագործակցություն, հաղորդակցում**

Շարունակական (հարատև) կրթության կենտրոնը աշխատակիցների որակավորման բարձրացման աշխատանքների համակարգման նպատակով համագործակցում է Համալսարանի բոլոր ստորաբաժանումների հետ: Ենթաբաժնի կողմից կարևորվում հետադարձ կապի ապահովումը, նաև հաղորդակցումը շահառուների հետ:

Այս առումով առանձնահատուկ է կենտրոնի համագործակցումը Համալսարանի մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի, էլեկտրոնային կրթական տեխնոլոգիաների կառավարման և սպասարկման, լրատվության և տպագրության բաժինների հետ:

- Մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի հետ համագործակցության արդյունքում իրականացվում է դասախոսական կազմի որակավորման բարձրացման ուղղությամբ կարիքների բացահայտում, վերլուծում և առաջարկությունների փաթեթի ներկայացում:
- Էլեկտրոնային կրթական տեխնոլոգիաների կառավարման և սպասարկման բաժինը աջակցում է դասավանդման նոր մեթոդների ներդրման և կիրառության աշխատանքների իրականացման գործընթացին:
- Լրատվության և տպագրության բաժնի միջոցով կենտրոնը աշխատակիցների որակավորման բարձրացման աշխատանքների համակարգման նպատակով հնարավորություն ունի տեղեկատվություն տարածելու (դասընթացներ, սեմինարներ, կոնֆերանսներ, հետազոտական աշխատանքներ, տպագրություններ) և նոր համագործակցային կապեր ստեղծելու համար: Առցանց հաղորդակցման համար կիրառվում են Համալսարանի ներքին ցանցային համակարգը, կայքը՝ համապատասխան էջով (<http://www.vsu.am/artaqinkaper/erasmusplus/printel>), Շարունակական (հարատև) կրթության կենտրոնի ֆեյսբուքյան էջը(<https://web.facebook.com/groups/266060760551842/>):

#### **4.4. Որակի ապահովում**

Շարունակական (հարատև) կրթության կենտրոնի աշխատակիցների որակավորման բարձրացման աշխատանքների համակարգման գործառույթներում կարևորվում են որակի ապահովման աշխատանքները.

- գործունեության գնահատման ցուցիչների սահմանում,
- պարբերաբար իրականացվող գործունեության գնահատում, վերլուծում,

- մատուցվող կրթական ծառայությունների կատարելագործում շահակիցների կարիքների վերհանման միջոցով
- դասախոսների որակավորման բարձրացման աշխատանքների կառավարման համակարգի բարելավում:

Որակի ապահովման աշխատանքներն իրականացվում են Համալսարանի որակի ապահովման կենտրոնի հետ համագործակցությամբ՝ օգտագործելով կրթական միջավայրի գնահատման գործիքներն ու մեթոդները:

#### **4.5. Կարողությունների զարգացում**

Շարունակական (հարատև) կրթության կենտրոնի անձնակազմի կարողությունների շարունակական զարգացման նպատակով անհաժեշտ է.

- հնարավորինս հստակեցնել բաժնի աշխատակիցների պաշտոնային պարտականությունները,
- հստակ պլանավորել աշխատակիցների զարգացման գործընթացը, ակնկալվող վերջնարդյունքները,
- Ապահովել անձնակազմի ընդհանուր և մասնագիտական կոմպետենցիաների շարունակական զարգացումը
- նպաստել աշխատակիցների հաղորդակցմանը, շահառուների մոտիվացիայի խթանմանը, հասարակության հետ կապերի սերտացմանը միտված հմտությունների զարգացմանը,
- աջակցել անձնակազմի մասնակցությանը փորձի փոխանակմանը նպաստող միջազգային և ցանցային սեմինարներին, կոնֆերանսներին, ֆորումներին,
- խթանել նորարարական գաղափարները և նախաձեռնողականությունը,
- համագործակցել հայաստանյան և եվրոպական բուհերի հետ՝ դասախոսական կազմի որակավորման բարձրացման աշխատանքների պլանավորման, իրականացման, գնահատման և բարելավման աշխատանքները իրականացնելու նպատակով:

#### **4.6. Միջազգային հարաբերություններ**

Շարունակական (հարատև) կրթության կենտրոնի աշխատակիցների որակավորման բարձրացման աշխատանքների համակարգման նպատակով միջազգայանցման ուղղությամբ իրականացվող աշխատանքների համար համագործակցում է Համալսարանի Միջազգային համագործակցության և կապերի բաժնի հետ, որը ներկայումս զբաղվում է բուհի միջազգայնացման ռազմավարությամբ (BOOST, ERASMUS+):

ERASMUS+ PRINTeL ծրագրի շրջանակներում նախատեսվում է սերտ համագործակցություն Լյուվենի կաթոլիկ, Գրացի կիրառական գիտությունների, Պորտոյի, Բարսելոնայի և Լինչոպինգի համալսարանների հետ և շարունակել

համագործակցությունը, մասնավորապես դասախոսների կատարելագործման ուղղությամբ:

Համագործակցության շրջանակներում նախատեսվում է նաև անդամակցություն դասավանդման և ուսումնառության վիրտուալ ակադեմիային (VATL):

**Հավելված 1**

Որակավորման բարձրացման ծրագրի կառուցվածքը

<b>1.ԿՐԹԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ</b>	
<b>1.1.</b>	<b>Ընդհանուր պատրաստություն</b>
<b>1.1.1</b>	<b>Անգլերենը ակադեմիական միջավայրում</b>
<b>1.1.2</b>	<b>Տեղեկատվական տեխնոլոգիաներ</b>
	• Համակարգչային գրագիտություն (կիրառական ծրագրեր` Word, Excel, Access, Internet Explorer և այլն)
	• Լսարանային ցուցադրությունների պատրաստում (Power Point և այլն)
	• Կիրառական ծրագրային փաթեթներ (MATLAB, LabVIEW և այլն)
	• Ուսուցողական Case-փաթեթների պատրաստում
<b>1.1.3</b>	<b>Մանկավարժական-հոգեբանական պատրաստություն</b>
	• Դասավանդման, ուսումնառության և գնահատման ժամանակակից մեթոդներ
	• Կրթական ծրագրերի մշակման հիմունքներ
	• Մանկավարժական հոգեբանություն
<b>1.1.4</b>	<b>Իրավագիտական պատրաստություն</b>
	• Աշխատողի իրավունքների և պարտականությունների օրենսդրական կարգավորումը
	• Կրթության մասին օրենքի ընդհանուր դրույթները
	• ՎՊՀ ՊՈԱԿ կանոնադրության և ներբուհական տարբեր կանոնակարգերի ուսումնասիրություն
<b>1.2</b>	<b>Մասնագիտական պատրաստություն</b>
<b>1.3</b>	<b>Որակավորման բարձրացման այլ ձևեր (վերապատրաստում, ստաժավորում, ամառային դպրոց և այլն)</b>
<b>2.ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ-ՄԵԹՈԴԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍ</b>	
<b>2.1</b>	<b>Հրատարակումներ</b>
<b>2.2</b>	<b>Զեկուցում համաժողովում (աշխատաժողովում կամ գիտաժողովում)</b>

## **ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

1. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ և ՏԵՍԼԱԿԱՆ .....	2
2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ .....	2
3. ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ (ՀԱՐԱՏԵ) ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԵՆԹԱԲԱԺՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ .....	3
3.1. Համալսարանի դասախոսների մասնագիտական կարողությունների զարգացման դասընթացներ.....	4
3.2. Մանկավարժական խորհրդատվություն .....	8
3.3. Գիտաժողովներ, աշխատաժողովներ և սեմինարներ .....	8
3.4. Ցանցային աշխատանք և լավագույն փորձի տարածում .....	9
3.5. Զարգացման ծրագրեր.....	9
3.6. Հրատարակումներ և ուսումնական նյութեր .....	10
4. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ և ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ .....	10
4.1. Կառուցվածքը .....	10
4.2. Դերային նկարագրերը.....	11
4.3. Համագործակցություն, հաղորդակցում.....	12
4.4. Որակի ապահովում .....	12
4.5. Կարողությունների զարգացում .....	13
4.6. Միջազգային հարաբերություններ .....	13
<u>Հավելված 1</u> Որակավորման բարձրացման ծրագրի կառուցվածքը.....	14

